ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ո՞ր քաղաքում են ընդունել օզոնային շերտը պաշտպանելու արձանագրությունը։**

1) Կոպենհագեն
2) Սիդնեյ
3) Մոնրեալ
4) Դուբլին

2 **Ավստրալիայում թեթև արդյունաբերությունը առավելապես ինչի՞ վրա է հիմնված։**

1) կաուչուկ
2) վուշ
3) բուրդ
4) բամբակ

3 **Աֆրիկայում ո՞րը միապետություն չէ.**

1) Սվազիլենդ
2) Լեսոտո
3) Մոզամբիկ
4) Մարոկկո

4 **Ո՞ր կլիմայական գոտին *չի* ներառում ԱՄՆ տարածքը։**

1) մերձհասարակածային
2) բարեխառն
3) մերձարևադարձային
4) արևադարձային

5 **Մարակաիբո ծոցը ո՞ր պետության տարածքում է գտնվում։**

1) Բոլիվիա
2) Վենեսուելա
3) Էկվադոր
4) Արգենտինա

6 **Ո՞րը Ասիայի լճերից չէ.**

1) Չադ
2) Սևան
3) Վան
4) Բայկալ

7 **Աշխարհի բնակչության քանի՞ տոկոսն է ապրում Ասիայում:**

1) 30%
2) 60%
3) 50%
4) 40%

8 **Ասիական ո՞ր երկիրը *չունի* տնտեսական զարգացման ցածր ցուցանիշ:**

1) Բահրեյն
2) Աֆղանստան
3) Մյանմա
4) Մոնղոլիա

9 **Չինաստանը արտադրում է համաշխարհային գյուղատնտեսական արտադրանքի**

1) 1/5-ը
2) 1/2-ը
3) 1/3-ը
4) 1/4-ը

10 **Ո՞ր լեզվաընտանիքի մեջ է մտնում վրացերենը:**

1) կովկասյան
2) հնդեվրոպական
3) չին-տիբեթական
4) ալթայան

11 **Ո՞ր երկրի տարածքավ *չի* անցնում Դանուբ գետը:**

1) Գերմանիա
2) Բելոռուս
3) Մոլդովա
4) Սլովակիա

12 **Ո՞րը ՌԴ սև մետաղաձուլական բազա *չէ*.**

1) Սիբիրյան
2) Մոսկովյան
3) Կենտրոնական
4) Ուրալյան

13 **Ո՞ր ազգի ներկայացուցիչներն են ամենաքիչը ներգաղթել Գերմանիա վերջին տասնամյակներին:**

1) շվեդներ
2) իտալացիներ
3) լեհեր

4) ռումինացիներ

14 **Ո՞ր երկիրն ունի չափազանց մեծ կախվածություն օտարերկյա ներդրումներից։**

1) Էստոնիա
2) Իսլանդիա
3) Նորվեգիա
4) Ֆինլանդիա

15 **Ո՞րը Հայկական հրաբխային բարձրավանդակի մաս *չէ*.**

1) Հարավային
2) Հյուսիսային
3) Արևելյան
4) Կենտրոնական

16 **Քանի՞ կմ է ՀՀ ամենաերկար ձգվածությունը։**

1) 390 կմ
2) 360 կմ
3) 370 կմ
4) 380 կմ

17 **Ցարական Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանում ո՞ր վարչական միավորը *չկար։***

1) ոստիկանական տեղամասեր
2) նահանգներ
3) գավառներ
4) մարզեր

18 **Ընտրել ՀՀ բնական ռեսուրսների և հանքավայրերի համապատասխանությունների ճիշտ շարքը.**

ա. պղնձամոլիբդենային	1. Մեղրաձոր
բ. ոսկի	2. Թեղուտ
գ. նեֆելինային սիենիտ	3. Սվարանց
դ. երկաթ	4. Շվանիձոր

1) ա–3, բ–1, գ–4, դ–2
2) ա–2, բ–1, գ–4, դ–3
3) ա–2, բ–4, գ–1, դ–3
4) ա–3, բ–4, գ–1, դ–2

19 **Ո՞ր լեռներից եկած լավաներով է ծածկվել Լոռու գոգավորությունը.**

1) Գուգարաց
2) Փամբակի

3) Բազումի
4) Ջավախքի

20 **ՀՀ տարածքում տարվա ընթացքում օդային հոսանքների ո՞ր հոսքն է տիրապետում:**

1) հարավային
2) հյուսիսային
3) արևելյան
4) արևմտյան

21 **ՀՀ-ում ջրօգտագործմանը վերաբերող պնդումներից ո՞րն է առջարկվող լուծում համարվում.**

1) Հոսակորուստների և ջրի չհաշվառված ծախսերի կրճատմանն ուղղված մեթոդական ուղեցույցների մշակում
2) Ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների և նորմատիվների բացակայություն
3) Հոսակորուստների և ջրի չհաշվառված ծախսերի օպերատիվ մոնիթորինգի համակարգի բացակայություն
4) Ջրի չհաշվառված ծախսերի բարձր շեմ, անխնա ջրօգտագործում

22 **ՀՀ տարածքի քանի՞ տոկոսն է ընդգրկում սելավների և ջրհեղեղների ազդեցության գոտին:**

1) 60%
2) 30%
3) 40%
4) 50%

23 **ՀՀ բնակչության արտագաղթի վերաբերյալ պնդումներից ո՞րը բացասական հետևանք *չէ:***

1) մեղմանում է գործազրկությունը
2) մարդկային կապիտալի արտահոսք
3) երկիրը զրկվում է տնտեսությունը զարգացնելու իրական ռեսուրսներից
4) մեծանում են տնտեսության զարգացման տարածքային անհամաչափությունները

24 **ՀՀ ո՞ր մարզում է գտնվում ամենահզոր արևային ֆոտովոլտային կայանը:**

1) Կոտայք
2) Արագածոտն
3) Սյունիք
4) Գեղարքունիք

25 **Ո՞ր հանքավայրի շահագործման ծրագիրն է դադարեցվել՝ արժանանալով հայաստանյան հասարակական և մասնագիտական շրջանակների սուր քննադատությանը՝ կապված բնապահպանական հնարավոր շատ բացասական հետևանքների հետ։**

1) Ագարակի
2) Ամուլսարի
3) Թեղուտի
4) Ախթալայի

26 **ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի մեքենաշինության ո՞ր ճյուղը գլխավորներից *չէր։***

1) ռադիոէլեկտրոնային արդյունաբերություն
2) էլեկտրատեխնիկական արդյունաբերություն
3) ռոբոտների արտադրություն
4) ավտոմատացման համակարգերի արտադրություն

27 **ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի ո՞ր քաղաքում կար սինթետիկ կորունդների արտադրություն։**

1) Վաղարշապատ
2) Երևան
3) Վանաձոր
4) Եղեգնաձոր

28 **Նշվածներից ո՞ր պարարտանյութը ՀՀ օրգանական գյուղատնտեսությանը բնորոշ *չէ*.**

1) ազոտական պարարտանյութ
2) գոմաղբ
3) կենսահումուս
4) թռչնաղբ

29 **Բնության և հասարակության բաղադրիչների տեղաբաշխումը, դրանց միջև առկա տարածական կապերը և օրինաչափություններն ուսումնասիրող գիտությունը կոչվում է.**

1) քաղաքագիտություն
2) երկրաբանություն
3) աշխարհագրություն
4) պատմություն

30 **Ո՞րը քարտեզների դասակարգման սկզբունք չէ՞.**

1) ըստ ընդհանրացման
2) ըստ մասշտաբի
3) ըստ բովանդակության
4) ըստ նշանակության

31 **Ո՞րն աշխարհագրական թաղանթի գլխավոր հատկանիշ չէ.**

1) ամբողջականություն
2) գոտիականություն
3) զոնայականություն
4) մակընթացություն

32 **Ո՞ր մայրցամաքն է ամենամեծը.**

1) Լավրասիա
2) Պանգեյա
3) Գոնդվանա
4) Եվրասիա

33 **Ո՞րն է մայրցամաքային ծանծաղուտի ամենաստորին խորությունը.**

1) 400 մ
2) 100 մ
3) 200 մ
4) 300 մ

34 **Ընտրել «մարզ — մարզկենտրոն» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. Սյունիք	ա. Հրազդան
2. Շիրակ	բ. Կապան
3. Արարատ	գ. Արտաշատ
4. Կոտայք	դ. Գյումրի

1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

քարտեզ 1



35 **Քարտեզ 1-ում ո՞ր ծովային հոսանքն է նշված Դ տառով.**

1) Կալիֆոռնիական
2) Ֆոլկլենդյան
3) Պերուական
4) Բենգելյան

36 **Քարտեզ 1-ում ո՞ր ծովային հոսանքն է նշված Գ տառով.**

1) Մոզամբիկի
2) Գվինեական

3) Կուրոսիո
4) Գվիանական

քարտեզ 2



37 **Քարտեզ 2-ում ո՞ր լեռնաշղթան է նշված Ա տառով.**

1) Վայքի
2) Մեղրու
3) Մռավի
4) Ուրծի

38 **Քարտեզ 2-ում ո՞ր մարզն է նշված Զ տառով.**

1) Շիրակ
2) Արագածոտն

3) Կոտայք
4) Արմավիր

39 **Ո՞րը Համաշխարհային տնտեսության փուլ չէ.**

1) հետարդյունաբերական
2) ագրարային
3) հետագրարային
4) արդյունաբերական

40 **Ո՞րը Հարավային կոնի երկիր չէ.**

1) Բրազիլիա
2) Արգենտինա
3) Պարագվայ
4) Մադագասկար

41 **Ո՞րը արդյունաբերության տարածքային կազմակերպման ձև չէ.**

1) արդյունաբերական երկրամաս
2) արդյունաբերական կետ
3) արդյունաբերական կենտրոն
4) արդյունաբերական հանգույց

42 **Ո՞ր երկիրը երկաթաքար չի արտահանում.**

1) Բրազիլիա
2) Ավստրալիա
3) Ճապոնիա
4) Հնդկաստան

43 **Ո՞ր կլիմայական գոտին ունի ագրոկլիմայական շատ ցածր ներուժ.**

1) մերձարկտիկական
2) արևադարձային
3) մերձարևադարձային
4) բարեխառն

44 **Ո՞ր ը կապի տեսակ չէ.**

1) ռադիո
2) հեռապատճենային
3) հեռախոս
4) խողովակաշարային

45 **Ո՞ր ծառայությունն է արտադրական տեսակի.**

1) մշակույթ
2) լիզինգ

3) առևտուր
4) կապ

46 **Ո՞ր ը ինքնատիպ տարածաշրջան *չէ*.**

1) քաղաքակրթական
2) ծովային
3) համաաշխարհագրական
4) լեռնային

47 **Ո՞ր երկիրը *չի* համարվում նոր արդյունաբերական.**

1) Լյուքսեմբուրգ
2) Թայվան
3) Սինգապուր
4) Հոնկոնգ

48 **Ըստ բնույթի ինչպիսի՞ համամոլորակային հիմնախնդիր *չկա*.**

1) կապի
2) համընդհանուր քաղաքական
3) բնատնտեսական
4) սոցիալական

49 **Ո՞րը էկոլոգիական հավասարակշռության խախտման անմիջական հետևանք *չէ*.**

1) էկոլոգիական աղետ
2) էկոլոգիական լարվածություն
3) էկոլոգիական ճգնաժամ
4) էկոլոգիական անվտանգություն

50 **Ըստ հաշվարկների որքա՞ն կբավարարեն ածխի պաշարները մարդկությանը։**

1) 300 տարի
2) 600 տարի
3) 500 տարի
4) 400 տարի

51 **Ո՞րը «ժողովրդագրական պայթյունի» անմիջական հետևանք *չէ*.**

1) մահացության աճ
2) ժողովրդի բարեկեցության ցածր մակարդակ
3) գործազրկության աճ
4) սոցիալական հակասությունների սրում

52 **Ո՞րը մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչ *չէ*.**

1) կրթվածություն
2) կենսամակարդակ
3) երկարակեցություն
4) քաղաքականություն

53 **Ո՞րը աշխարհագրական մտածողության հատկանիշ չէ.**

1) կոնկրետություն
2) տարածականություն
3) ռիթմիկություն
4) համալիրություն

54 **Ո՞ր մեթոդի միջոցով է հայտնաբերվել օդի ջերմաստիճանի վերընթաց փոփոխության օրինաչափությունը:**

1) վիճակագրական
2) քարտեզագրական
3) նկարագրական
4) համեմատական

55 **ԱՏՀ-ում ո՞ր համակարգն է թույլ տալիս ծրագրային բաղադրիչների օգնությամբ բազաներից ընտրված տվյալների հիման վրա ստեղծել բոլորովին նոր քարտեզ.**

1) տվյալների բազայի կառավարման
2) պատկերների մշակման
3) քարտեզների արտացոլման
4) աշխարհագրական վերլուծության

56 **Գրել հրաբխային ծագման ապարների համարները.**

1) մարմար
2) կրաքար
3) բազալտ
4) քարածուխ
5) տուֆ
6) քարաղ
7) կավ
8) գրանիտ

57 **Գրել այն երկրների համարները, որոնք տարածքի մեծությամբ համարվում են գերխոշոր.**

1) Ռուսաստան
2) Իրան
3) Գերմանիա
4) Կանադա
5) Չինաստան
6) Ավստրալիա
7) Ուկրաինա
8) Ճապոնիա

58 **Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության թվով համարվում են հսկա.**

1) Հնդկաստան
2) Չինաստան
3) Բելոռուս
4) Իրաք
5) Ֆրանսիա
6) Վրաստան
7) Ինդոնեզիա
8) Լիբանան

59 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.**

1) Ուկրաինա
2) Ֆրանսիա
3) Դանիա
4) Բելգիա
5) Շվեդիա
6) Քուվեյթ
7) Նորվեգիա
8) Բրազիլիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում համեմատաբար մեծ է երեխաների բաժինը.**

1) Աֆղանստան
2) Հնդկաստան
3) Իսլանդիա
4) Գերմանիա
5) Նորվեգիա
6) Շվեդիա
7) Նիգերիա
8) Պակիստան

61 **Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության մեծ մասը դավանում է մահմեդականություն.**

1) Ինդոնեզիա
2) Ճապոնիա
3) Իտալիա
4) Արգենտինա
5) Սիրիա
6) Իրան
7) Վենեսուելա
8) Պորտուգալիա

62 **Տրված օվկիանոսների համարները դասավորել ըստ դրանց տարածքի մակերեսի նվազման կարգով.**

1) Հնդկական
2) Խաղաղ
3) Ատլանտյան

63 **Տրված լճերի համարները դասավորել ըստ նրանց բացարձակ բարձրության նվազման կարգով.**

1) Կասպից
2) Տիտիկակա
3) Սևան

64 Գետի միջին ծախսը 22 մ³/վ է: Որոշել գետի հոսքը 1 ժամում:

65 Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ.ե.40˚-ի վրա է, մյուսը՝ արմ.ե.70˚-ի: **Որոշել քաղաքների միջև ամենակարճ հեռավորությունը:**

66 Երկրի մակերեսը կազմում է 200 000 կմ²: Որքա՞ն մակերես կզբաղեցնի այն 1 : 2000 000 քարտեզում:

67 Երկրի բնակչության թիվը 80 000 է, բնական աճի գործակիցը՝ 25‰: Տարվա ընթացքում ներգաղթել են 1800 մարդ, իսկ արտագաղթել՝ 2700 մարդ: Որոշել երկրի բնակչության թիվը 1 տարի հետո:

68 Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 6 մլն. է, երկրի բնակչության թիվը՝ 8 մլն. է: Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը:

69 **Աշխարհագրության կառուցվածքի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Հնէաշխարհագրությունը, լանդշաֆտագիտությունը, մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը համալիր գիտություններ են հասարակական աշխարհագրության կազմում:
2) Որպես աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ աշխարհագրությունը մտնում է բնական գիտությունների, իսկ որպես մարդոլորտի հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ հասարակական գիտությունների համակարգի մեջ:
3) Հասարակական աշխարհագրական գիտություններն ուսումնասիրում են աշխարհագրական թաղանթի ոլորտներում տեղի ունեցող բնական երևույթները:
4) Բնական աշխարհագրության կազմում առանձնահատուկ կարևոր տեղ ունի բնակչության աշխարհագրությունը, քանի որ նրա ուսումնասիրության առարկան սերտորեն կապված է բնական միջավայրի հետ:
5) Ընդհանուր աշխարհագրությունն ուսումնասիրում է այն օրենքներն ու օրինաչափությունները, որոնք ընդհանուր են թե՛ բնական և թե՛ հասարակական երևույթների տարածքային փոփոխությունների համար:
6) Բնական աշխարհագրության ճյուղային գիտություններից են երկրաձևաբանությունը, կլիմայագիտությունը և հողերի աշխարհագրությունը:

70 **Ազիմուտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) 115° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է:
2) Հյուսիսային ազիմուտը 0° կամ 360° է:
3) Արևմուտքի ազիմուտը 90° է:
4) Հարավի ազիմուտը 180° է:
5) 105° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է:
6) 95° ազիմուտը հորիզոնի հյուսիարևելյան կողմում է: